ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱՉՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ IV^{ա} ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2017թ. սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի IV " դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը և տնօրենի մասնագիտացված կրթական առաջարկությունների գծով տեղակալ Լիանա Տերյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը կազմակերպելու հարցը:
4. Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու, ծնողական ներդրումների հարցը:
5. Ընթացիկ հարցեր /կարգապահություն,հերթապահություն/:

1.Լսեցին.

Ելույթ ունեցավ դասղեկ Թերեզա Սամսոնյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 4-րդ ա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս:Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Լիլիթ Թադևոսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

Որոշեցին.

4-րդ ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1.Լիլիթ Թադևոսյան՝ /նախագահ/
2.Լիլիթ Պապյան /անդամ/
3.Սոնա Մարտիրոսյան /անդամ/
4.Նունե Աբրահամյան /անդամ/
5.Հերիքնազ Հովհաննիսյան /անդամ/

2.Լսեցին.
Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
Դասղեկ Թերեզա Սամսոնյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:
Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր /թեմատիկ, աշխատանքային, օրագրեր/, գրենական պիտույքներ:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր /թեմատիկ, աշխատանքային/:

3.Լսեցին.

Մնդուաղրուրկ և սոցիալապես անապահով երեխաների նյութական օգնություն ցույց տալու աշակերտների հանգստի ժամանցը կազմակերպելու հարցը:
Դասղեկ Թերեզա Սամսոնյանը ներկայացրեց, որ բոլոր դասարաններում՝ էլ՝ կան սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաներ, որոնց դպրոցի, համայնքապետարանի կողմից դասագրքերի, հագուստի համար օգնություն հաճախ տրամադրվում է: Սակայն ուսումնաճանաչողական նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաներ, թանգարան, թատրոն այցելությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել նման երեխաների ներկայությունը: Դա շատ կարևոր է նման ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց նորմալ հոգեբանական զարգացումը ապահովելու համար: Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ, մարդկային հարաբերությունների ձևավորումը, հատկապես, որ դա ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում է գտնվում:

Որոշեցին.
Տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել անապահով ընտանիքի երեխաներին:

4. Լսեցին.
Տարրական դասարաններում «Տաք սնունդ» ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու ծնողական ներդրումների հարցը:
Դասղեկ Թերեզա Սամսոնյանը ներկայացրեց, որ դպրոցը նոր ուսումնական տարում մասնակցելու է «Տաք սնունդ» ծրագրին, որը առավել կազմակերպված և երեխաների աճի ու զարգացման համար անհրաժեշտ սննդանյութերով /օր. ապիտակուցներ/ հագեցված ու

համեղ պատրաստված սնունդով ապահովելու համար ծնողները կարող են մասնակցել ծրագրին ծնողական ներդրման տեսքով: Ծնողները նշեցին, որ դա շատ կարևոր ծրագիր է , երեխաները դպրոցում սիրով կմնան ու կսովորեն, եթե կուշտ լինեն և ուտեն համեղ ու հագեցած սնունդ: Դրա համար բոլորն էլ համաձայն են մեկ մարդու նման օրական որոշակի գումար տրամադրել այդ նպատակով:

Որոշեցին.

Ունենալ ծնողական ներդրում <<Տաք սնունդ>> ծրագրին օրական 100-ական դրամի չափով: Մասնակցել, հետևել սննդի պատրաստման և որակի ապահովման գործընթացին:

Լսեցին.

5.Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Թերեզա Սամսոնյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասերը սկսվելու են9:00, ավարտվելու են 15:00-ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով և դպրոցական համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Լիլիթ Թադևոսյան

Քարտուղար՝ Լիլիթ Պապյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2017թ. սեպտեմբերի 25-ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի IV՝ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. 1 կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփում:

2. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին. 1 կիսամյակի առաջադիմության արդյունքների ամփոփման հարցը:

Խոսք ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ 1 կիսամյակում IV՝դասարանում սովորել են 22 աշակերտներ: Ուստարվա ընթացքում Հայրապետյան Հայկը տեղափոխվել է ՌԴ: 21աշակերտներից գնահատվել 1-ն 20 բ՝ Մկրտչյան Արսենը երկարատև բացակայությունների պատճառով ոչ մի տարի չի գնահատվել: Սովորողները կիսամյակի ընթացքում եղել են ակտիվ, քիչ են բացակայել: Դեկտեմբերին տրվել են տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ մայրենիից և մաթեմատիկայից: Արդյունքները գոհացուցիչ են: 1 կիսամյակի ընթացքում դասարանի առաջադիմությունը 93% է, որակական ցուցանիշը՝ 66,6%, բացակայությունը՝ 314 ժամ: Դասարանում կան 2 գերազանցիկ աշակերտներ /Խաչատրյան Նելլի, Մարտիրոսյան Կարինե/ և 12 հարվածային, ընդ որում կան աշակերտներ,որոնք թերացել են 1 առարկայից: Դասղեկը դժգոհ էր Մարտիրոսյան Սոլոպայից և Նավասարդյան Աղասիից, որոնք իրենց [illegible] ներածին տոմսով չեն աշխատում: Դասղեկը տեղեկացրեց, որ IV դասարանում տարեվերջին սովորողները պետք է հանձնեն գիտելիքների ստուգում մայրենիից և մաթեմատիկայից: Ընդհանուր առմամբ դասղեկը գոհ էր 1 կիսամյակի առաջադիմության արդյունքներից:

Որոշեցին.- Ավելի ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: I կիսամյակի ընթացքում տեղ գտած թերությունները չտակել II կիսամյակում:

2. Լսեցին.-Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հագախումների նկատմամբ: Այնուհետև ելույթ ունեցավ ծնողխորհրդի նախագահ Լ. Թադևոսյանը՝ նշելով, որ ուստարվա ընթացքում կարևոր է երեխաների այցելությունը մշակութային օջախներ: Սովորողների գեղագիտական ճաշակը բարձրացնելու նպատակով առաջարկեց կազմակերպել էքսկուրսիա Երևան: Սոնա Մարտիրոսյանը նշեց, որ հունվար ամսին տարբեր մշակութային օջախներում կազմակերպվում են տոնական միջոցառումներ՝ նվիրված Ամանորին: Առաջարկեցին հունվար ամսին կազմակերպել այցելություն Մատենադարան և Ար. Խաչատրյանի անվան համերգասրահ՝ դիտելու Ամանորին նվիրված երաժշտական ներկայացում:

Որոշեցին.- Հավաքագրել 2500-ական դրամ հունվարի 10-ին այցելելու Մատենադարան, Ար. Խաչատրյանի անվան համերգասրահ և լուծել տրանսպորտի հետ կապված խնդիրները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Լիլիթ Թադևոսյան/

Քարտուղար՝ / Լիլիթ Պապյան/